

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԳՅԱՆԻ ՉԱՓԱԾՈ ԼԵԳԵՆՂՆԵՐԸ
ՏԵՔՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ

Ավետիք Իսահակյանի չափածո լեգենդները կղիսարկենք Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի (ԳԱԹ) Իսահակյանի ֆոնդում պահվող լեգենդների թվային հաջորդականության կարգով: Ավ. Իսահակյանի «Մայրը» (1907) չափածո լեգենդը՝ «Խեղճ մայրը» վերնագրով, առաջին անգամ տպագրվել է «Խարխախ» օրաթերթում (1907, օգոստոսի 19, N 39): Վերամշակվելով՝ այն հրատարակվել է 1922 թ.:

«Մայրը» լեգենդի մեքենագիր տեքստի վրա կատարված փոփոխությունները, որոնք չեն սահմանափակվում միայն առանձին տողերի շրջանակներով, այլ ունեն ամբողջական դրսևորում, մեզ թույլ են տալիս պնդելու, որ դա հիշյալ լեգենդի առաջին տարբերակն է, իսկ վերամշակվածը՝ երկրորդ և վերջնական, այսինքն՝ հիմնական տեքստը:

Տեսնենք, թե ինչ տարբերություններ կան Իսահակյանի «Մայրը» լեգենդի մեքենագիր և կանոնիկ՝ տեքստերի միջև: Դրանք իրենց ծավալով գրեթե հավասար են, առաջինը վաթսուհին տող է, երկրորդը՝ վաթսուներկու: Սակայն բովանդակությամբ զգալիորեն տարբերվում են: Այս իմաստով ուշագրավ են հատկապես լեգենդի սկիզբն ու վերջը կազմող հատվածները:

Մրտես կուց-կուց արուն կուգա,

Երբ այս մռայլ գիշերին,

Ուր ամայի ճամփոց վրա,

Կամ անտառում սև, մթին,

Գայլն է ոռնում, քամին լալիս...

Ա իս, այն պատավ խղճուկ մոր

Սև գրույցն է միտս գալիս,-

Զրույցն այս հին, բայց միշտ նոր...

Եվ ո՞վ գիտե՝ որտեղ հիմա՝

Մեզնից մոտիկ, թե հեռվում,

Անտուն, անտեր ո՞ր մոր վրա

Գայլն ու քամին են ոռնում!...

* «Կանոնիկ տեքստ» ասելով՝ այսուհետև նկատի ենք ունենալու Իսահակյանի երկերի ժողովածուի (6 հատորով, 1973-1979) գիտական հրատարակության մեջ զետեղված համապատասխան տեքստը:

¹ ԳԱԹ, Իսահակյանի ֆոնդ, II բաժին, N 262:

12 տողից բաղկացած այս հատվածը, որով ավարտվում է առաջին տարբերակը, կանոնիկ տեքստում փոխարինվել է նախերգանք հիշեցնող տասնտողանի հատվածով, որը նախապատրաստում է ապագա գործողությունները՝ համապատասխան մթնոլորտ ու տրամադրություն ստեղծելով.

Անտառներում՝ աշնան թափուր,

Երբ թաց խավարն է իջնում,

Երբ դաշտերում մերկ ու տխուր,

Ցուրտ քամին է շառաչում,-

Ամեն անգամ գգում եմ նոր

Ձրույցն այս իւեղճ պատավ մոր:

Եվ խորհում եմ, թե արդյոք ուր,

Մեզնից մոտիկ կամ հեռուն,

Ո՞ր անտերունչ խեղճին հիմա

Չարի ձեռքն է հարվածում?²...

Վերամշակված տեքստը սեղմվել-բյուրեղացել է բովանդակությամբ ու կառուցվածքով: Գերակշռող երկվանկ ոտքերը՝ յամբերը, մասամբ փոխարինվել են եռավանկ ոտքերով՝ անապեստներով: Սակայն ռիթմը նույնն է մնացել, որովհետև պահպանվել է տողերի վանկային հավասարությունը (կենտ տողերն ունեն ութ վանկ, գույգ տողերը՝ յոթ):

«Զգիտեմ՝ ե՞րբ և ո՞ր շենում» կանոնիկ տողի համար Իսահակյանն ստեղծել է 5 տարբերակ.

1. Մի հայ գյուղում, թե այլ տեղում

2. Ժամանակով մի հայ գյուղում

3. Ժամանակով մի հայ շենում

4. Տասն ասում էր, թե մի շենում

5. Զգիտեմ՝ ե՞րբ և ո՞ր շենում:

Մյուս հատվածը կրել է հետևյալ փոփոխությունները.

-Ա՛յ մարդ, ասավ հարսը մի օր,

Բեռ է մերդ իմ վրա.

Բանս թողած ու սմբողջ օր

Փեշն եմ բռնել հենց նրա... (I տարբերակ)

-Օ՛Ֆ- ասում էր հարսն ամեն օր,

Մերդդ բեռ է իմ վրա.

Բանքս թողած՝ օրը բոլոր

Փեշն եմ բռնել ես նրա... (կանոնիկ տեքստ)

Բայի ժամանակաձևի (ասավ-անցյալ կատարյալ, ասում էր-անցյալ անկատար) և դերանվան (մի-անորոշ դերանուն, ամեն-որոշյալ դերանուն)

² Ավ. Իսահակյան, ԵԺ, հ. 2, եր., 1974, էջ 169:

փոփոխությամբ Իսահակյանը ձգտել է ընդգծել հարսի զանգատ-այսիանջի շարունակական բնույթը, նրա հետևողականությունը, իսկ շարադասական փոփոխությունները կատարվել են հանգավորման նպատակով:

Անցավ մի օր հարսը էլի

Կպավ գլուխը մարդու.

Թե մարդս չես, թե ավելի

Պատավ՝ մորդ ես սիրում դու...

Անզգամացա վ, պատռա վ, լացե ց.

Պոկեց մազերը գլխից,

Վրա պրծավ, դուռը բացեց.

Թե մորդ տար իմ տնից... (I տարբերակ)

Եթե այստեղ Իսահակյանն ինչ-որ չափով հոգեբանորեն պատճառաբանել է հարսի վերաբերմունքը (Թե մարդս չես, թե ավելի /«Պատավ մորդ ես՝ սիրում դու...»), ապա վերամշակման մեջ փոխել է դա, ավելացրել չորս տող՝ վարպետորեն գծագրելով հարսի չարությունն ու նենգությունը.

Բայց ամեն օր հարսն անողորմ

Ամուսնու սիրտն էր կրծում,

Եվ խստաբար պահանջում էր

Իր չար կամքին գոհացում:

Ու մի օր էլ ճըչաց, լացեց.

Պոկեց մազերը գլխից,

Վրա պրծավ, դուռը բացեց,

Թե մորդ տար իմ տնից.

Թե ոչ՝ հիմի դուրս կթոնի

Ու կըձենե աշխարհում,

Թե մարդն իրեն օր չի տալի,

Թե ուրիշին է սիրում: (կանոնիկ տեքստ)

Լեզենդի վերջին մասը ենթարկվել է այսպիսի փոփոխություններին.

I տրբ.՝ Ու գլխաբաշ ճամփա ընկավ

Կտ.՝ Գլուխը կոր՝ ճամփա ընկավ

I տրբ.՝ Միտքը պղտոր ու խուլեր

Կտ.՝ Միտքը մտայլ ու խուլեր

I տրբ.՝ Մուկը փաթեթեց, գիշերն եկավ

Կտ.՝ Սև ամպերից գիշերն իջավ

I տրբ.՝ Ճամփեն՝ ոլոր ու մոլոր

* «Պատավ» բառի փոխարեն Իսահակյանը նախապես գրել էր «Քավթառ»՝ այս տողի համար ստեղծելով երկու տարբերակ:

** I տրբ.- առաջին տարբերակ:

*** Կտ.- կանոնիկ տեքստ:

Կտ. Ճամփան՝ մթին ու մոլոր
 I տրբ. Մեջ գիշերին հասավ անտառ
 Կտ. Ուշ գիշերին հասավ անտառ
 I տրբ. Պարկը քցեց - մորը անճար
 Կտ. Պարկը ձըգեց - մորը անճար
 I տրբ. Քամին անէ դ կըմոխար
 Կտ. Աշնան քամին էր եծկլտում
 I տրբ. Գայլերը խուլ կոռնային
 Կտ. Գայլն էր տալիս կալանջին
 I տրբ. Մոր ձենն հասավ ականջին
 Կտ. Մոր ձայնն հասավ ականջին
 I տրբ. Բալա ս, վերցրու պարկը քեզ հետ
 Կտ. Տղա ս, վերցրու պարկը քեզ հետ
 I տրբ. Պարկը ձեզի պետք կըգա
 Կտ. Պարկը տանը պետք կըգա:

«Ուշ գիշերին հասավ անտառ» տողի համար ստեղծել է չորս տարբերակ.

1. Մեջ գիշերին հասավ անտառ
2. Գիշերվա մեջ հասավ անտառ
3. Մութ գիշերին հասավ անտառ
4. Ուշ գիշերին հասավ անտառ:

Լեզենդի վերջնամասի նախնական և վերամշակված տարբերակների համեմատությունը ցույց է տալիս, որ փոփոխությունների մի մասը կատարվել է գրականացման միտումով՝ գլխաքաշ-գլուխը կոր, ճամփեն-ճամփան, քցեց-ձգեց, ձեն-ձայն, բալաս-տղաս և այլն: Մյուս փոփոխություններից հատկանշական է բնության անեղ տարերքի՝ քամու անձևավորումը, գեղարվեստական մի հնարանք, որով քամին հաղորդակից է դարձել պառավ մոր թշվառ ճակատագրին: Վերամշակվելով «Մայրը» լեզենդին, այսպիսով, հղկվել, բյուրեղացել է՝ դառնալով ոչ միայն նրա մայրերգության կայուն այուններից, այլև հայ գրականության մնայուն արժեքներից մեկը:

Իսսահակյանի *«Հայաստանը»* չափածո լեզենդի տեքստային տարբերությունները կրում են մասնակի բնույթ, այսինքն՝ դրանք հանդես են գալիս առանձին բառային փոփոխությունների՝ տարընթերցումների ձևով.

Հայերի վրա գայրացավ Աստված,
 Որ նրանք թեն ունեն մեծ հանճար,
 Բայց միաբան չեն և ռիտվ լցված
 Նախանձով, կրքով ատում են իրար³:
 Հայերի վրա գայրացավ աստված,

³ ԳԱԹ, Իսսահակյանի ֆոնդ, II բաժին, N 263:

Որ նրանք ունեն թեն ճոխ հանճար,
Բայց չեն միաբան. և ոխով լցված,
Դավով, նախանձով ատում են իրար⁴:

Այստեղ կատարվել է երեք շարադասական և երկու բառային փոփոխություն: Շարադասությունն, ըստ երևույթին, փոխվել է ներքին հանգստեղծելու նպատակով: Ամբողջ լեզենդիի բնորոշ խաչաձև հանգավորման (1-3, 2-4) սկզբունքն Իսահակյանը կիրառել է նաև ներքին հանգի (1-3. զայրացավ-միաբան, 2-4. ունեն թեն ճոխ-նախանձով) դեպքում: Վերջինս նպաստել է ոխովի զգացողության ուժեղացմանն ու իմաստի ընդգծմանը:

Ավ. Իսահակյանի ֆոնդում գտնվում է մի *անտիպ չափածո լեզենդ*, որի առանձին տողեր ենթարկվել են փոփոխությունների: Նախ մեջբերենք լեզենդն ամբողջությամբ՝ իր վերջնական տեսքով.

Ես դեռ պատանի՝
Լսեցի մի երգ,
Մի կույր զուսանի
Երգը սրտագեղ.
Եղել է հետոյ,
Հին ժամանակում մի սրտով տղա,
Սիրել է անգութ,
Մի չար ու անգութ սիրուն աղջկա:
Սիրել է սրտով, տարիներ անհույս,
Ու կարոտ նրա տեսքին ու խոսքին,
Սիրել է սրտով, լացել է անհույս,
Եվ հոգու խորքից ծուխ է բխել,
Այրելով նրան, մոխիր դարձրել:
Երբ ես լսեցի,
Լաց եղա տխուր.
Ասես իմ բախտը
Պարզ նախատեսա:
Ես էլ սիրեցի իմ կորած կյանքում,
Սիրեցի սրտով, տարիներ անհույս
Եվ հառաչեցի, և հառաչելով
Սիրում եմ նորից,
Եվ ամեն անգամ կրակ է բխում
Իմ վառված սրտից և այրում է ինձ⁵:

Այժմ ներկայացնենք լեզենդի տարբերությունները՝ նախնական և ուղղված տողերը զուգադրելով.

⁴ Ավ. Իսահակյան, ԵԺ, հ. 2, եր., 1974, էջ 227:

⁵ ԳԱԹ, Իսահակյանի ֆոնդ, II բաժին, N 265:

Նախն. տ.⁶ Լսեցի մի հին երգ

Ուղղ. տ.⁷ Լսեցի մի երգ

Նախն. տ. Սիրել է անհույս, տարիներ անհույս

Ուղղ. տ. Սիրել է սրտով, տարիներ անհույս

Նախն. տ. [«անընթեռնելի»], մոխիր դարձրել

Ուղղ. տ. Այրելով նրան, մոխիր դարձրել

Նախն. տ. Սիրում եմ նորից, և ամեն անգամ

Ուղղ. տ. Սիրում եմ նորից:

Ավ. Իսահակյանի «Հավերժական սերը»⁸ բալլադը՝ նախապես գրվել է արձակ և «Հավիտենական սերը» վերնագրով առաջին անգամ հրատարակվել «Բազին» շաբաթաթերթում (1912, փետրվարի 2, N 7): Զափածոյի է վերածվել 1914 թվականի նոյեմբերի 27-ին Բեռլինում:

Հ. Ղանալանյանի հետ զրույցներից մեկի ընթացքում Իսահակյանը խոստովանել է. «Մեր նախահայրերը» սկզբնապես արձակ գրեցի, ինչպես և «Հավերժական սերը» (ընդգծ.՝ Հ. Վ.): Հետագայում էր, որ վերածեցի այն չափածոյի, և գիտե՞ս՝ մի շնչով գրվեց: Իմ այդ երկու ստեղծագործություններն էլ, հակառակ իմ սովորության, հետագայում ոչ մի փոփոխության, վերամշակման չեն ենթարկվել»⁹: Հետաքրքիր է, որ բալլադը նախնական ձևով տպագրվել է ավելի ուշ, (1921, «Գեղարվեստ») քան նրա մասնակիորեն փոխված տեքստը (1920, «Հայրենի աղբյուրից»):

Ավ. Իսահակյանի ֆոնդում պահվող ձեռագրի⁷ և կանոնիկ տեքստի⁸ համեմատության միջոցով ներկայացնենք «Հավերժական սերը» բալլադի տեքստային տարբերությունները՝ տարբերությունները.

Ձտ.⁹ Լիբանանի սեպ ժայռերը փեշերի

Կտ.¹⁰ Մեպ ժայռերը Լիբանանի փեշերի

Ձտ. Արքայական զուգի շուրջը զվարթուն

Կտ. Արքայական գահի շուրջը զվարթուն

⁶ Նախն. տ.- նախնական տող:

⁷ Ուղղ. տ.- ուղղված տող:

⁸ Իսահակյանի բալլադներն ու չափածո լեզենդներն իրարից զրեթ չեն տարբերվում: Սակայն, նկատի ունենալով այն հանգամանքը, որ բալլադի դեպքում կարևորում են քնարականությունը և բարոյական հարաբերությունները, իսկ լեզենդի դեպքում՝ բնության և աշխարհագրության արձագանքները, «Հավերժական սերը» պետք է դասել բալլադների շարքին:

⁹ Հ. Ղանալանյան, Մտերիմ դեմքեր, Եր., 1965, էջ 39:

⁷ Տե՛ս ԳԱԹ, Իսահակյանի ֆոնդ, II բաժին, N 267:

⁸ Տե՛ս Ավ. Իսահակյան, ԵԺ, հ. 2, Եր., 1974, էջ 179-182:

⁹ Ձտ.- ձեռագիր տարբերակ:

¹⁰ Կտ.- կանոնիկ տեքստ:

2տ. Եվ արծաթյա վահանի պես լուսնկան
 Կտ. Եվ արծաթյա կարապի պես լուսնկան
 2տ. Բեկբեկում է շատրվանի ջրերը
 Կտ. Փայփայում է ավազանի ջրերը
 2տ. Բայց իմ սերը վախճան չունի, ափ չունի
 Կտ. Բայց իմ սերը վախճան չունի, հուն չունի
 2տ. Եվ վայրկյանը դառնում հավերժ ու անվերջ
 Կտ. Ժամանակը դառնում վայրկյան ու հավերժ
 2տ. Արաբական մուշկ ու կնդրուկ է բուրում
 Կտ. Երազանուշ մուշկ ու կնդրուկ է բուրում:

Կատարված փոփոխությունները քիչ են, բայց տեղին են՝ ձևի և բովանդակության դիտանկյունից: Բնորոշ են դրանցից երկուսը: Առաջինը շարադասական փոփոխությունն է, որով իրականացվել է միանգամից երկու խնդիր՝ իմաստային (հատկացուցիչ-հատկացյալի հստակեցում՝ **Լիբանանի փեշերի**) և ձևային (ներքին հանգի ստեղծում՝ խաչաձև հանգավորումով՝ **սեպ ժայռերը** - ինչպես կուրծքը): Երկրորդը համեմատյալի (վահան - **կարապ**) և համեմատության հիմքի (բեկբեկում է - **փայփայում է**) փոփոխությունն է, որով գեղարվեստական պատկերը շեշտվորվել, համահունչ է դարձել Էլ-Սամանի սիրո շշուռջին:

«Ժամանակը դառնում վայրկյան ու հավերժ» կանոնիկ տողի համար ստեղծվել է երեք տարբերակ.

1. Եվ վայրկյանը դառնում հավերժ ու անվերջ
2. Եվ դառնում են ժամերն վայրկյան ու հավերժ
3. Ժամանակը դառնում վայրկյան ու հավերժ:

«Հայրենի հողը» (1920) չափածո լեզենդն առաջին անգամ լույս է տեսել 1940 թ. («Խորհրդային գրող», N 12), նրա վերամշակված տարբերակը՝ 1950 թ.: Վերստին փոփոխության ենթարկվելով՝ տպագրվել է 1955 թվականին: Իսահակյանի ֆոնդում պահվող ձեռագրի, Հ. Ղանալանյանին նվիրած ինքնագրի և կանոնիկ տեքստի հիման վրա դիտարկենք «Հայրենի հողը» լեզենդի տեքստային տարբերությունները:

-Մայրենի տաղով, հայրենի հողով,-
 Չայնում է ուժով մի ձեր շինական,-
 Կերթանք նրա մոտ մեր գուսանն ու ես,
 Նա չի լքի մեզ, կբերենք նրան⁹:

Այս քառատողը կանոնիկ տեքստում կրել է հետևյալ շարադասական փոփոխությունները.

-Մայրենի տաղով, հայրենի հողով

⁹ ԳԱԹ, Իսահակյանի ֆոնդ, II բաժին, N 268:

Կերթանք նրա մոտ մեր գուսանն ու ես,-

Ձայնում է ուժով մի ծեր շինական,-

Կրերենք նրան, նա չի լքի մեզ¹⁰:

«Շինականն արտից առավ մի բուռ հող» կանոնիկ տողի համար հեղինակն ստեղծել է երեք տարբերակ.

1. Ծերուկը արտից առավ մի բուռ հող
2. Գեղջուկը արտից առավ մի բուռ հող
3. Շինականն արտից առավ մի բուռ հող:

Հետաքրքիր է հաջորդ հատվածի ստեղծման ընթացքը՝ ինքնագրից մինչև կանոնիկ տեքստ.

Գուսանը մտավ ապարանքը ճոխ,
Սագն հանեց ուսից և սեղմեց կրծքին
Եվ ժողովրդից՝ լքված, ուտակոխ,
Սիրո ողջույններ <...> իշխանին:
Խնջույքի մեջ էր իշխանը շքեղ՝
Հին ընկերներով բազմած սեղանին.
Վառվում էր գինին թասերում բյուրեղ,
Պար էին գալիս կույսեր գեղանի:
Տարածեց ձեռքը իշխանը խոռով,
Լոեց դառնիճը խենթ գինարբուքի,
Զարկեց լարերին գուսանը խանդով,
Եվ լեզու առան լարերը ոսկի¹¹:

2. Ղանալանյանին նվիրած ինքնագրի մեջ Իսահակյանն այս հատվածի առաջին երկու տունը ջնջել-փոխարինել է մեկով.

Տավիղն հինավուրց հանելով ուսից՝
Գուսանը մտավ դառնիճը շքեղ,
Խնջույքի մեջ էր իշխանը նորից,
Պար էին գալիս կույսեր աչագեղ:

Վերջինս կանոնիկ տեքստում հանդես է գալիս հետևյալ ձևով.

Տավիղն հինավուրց հանելով ուսից՝
Գուսանը կանգնեց դառնիճում մարմար,
Զարկեց լարերին թափով, խանդալից,
Եվ լեզու առավ տավիղն ոսկելար:

Ինչպես տեսնում ենք, այս կանոնիկ տունն ստեղծվել է 2 տարբեր տների առաջին ու վերջին երկտողերի միացման միջոցով: Վերջին երկտողը, ենթարկվել է որոշ փոփոխությունների (գուսանը խանդով – թափով, խանդալից և լարերը ոսկի – տավիղն ոսկելար)՝ «գուսան» բառի կրկնու-

¹⁰ Ավ. Իսահակյան, ԵԺ, հ. 2, Եր., 1974, էջ 194:

¹¹ 2. Ղանալանյան, Մտերիմ դեմքեր, Եր., 1965, էջ 43:

թյունից խուսափելու և խաչաձև հանգավորում (հանելով ուսից - թափով, խանդավից, դահլիճում մարմար, տավիղն ոսկելար) ստեղծելու նպատակով: «Մոտեցավ, դրեց քսակը հողով» կանոնիկ տողի համար ստեղծվել է երեք տարբերակ.

1. [Մոտենամ, մոտեցավ, դրեց] քսակը հողով
2. Դնում է փոքրիկ քսակը հողով
3. Մոտեցավ, դրեց քսակը հողով:

Ավ. Իսահակյանի **«Սոկրատեսը»** (1936) չափածո լեզենդն առաջին անգամ հրատարակվել է 1938 թ. («Խորհրդային գրականություն», N 8-9):

Լեզենդի մտահղացման իմաստով ուշագրավ է Իսահակյանի արձեպյան գրառումը. «Սոկրատեսի բանտից իջնում եմ Ակրոպոլի տակ և խորհում եմ վերջերս կարդացած այն դեպքի մասին, երաժշտագետի հետ... Այո, մահից առաջ, նույնիսկ ընդհուպ մահից առաջ պիտի սովորել չգիտեցածը, սովորել անվերջ... Ամեն ինչ գիտենալ և մեռնել՝ հոգ չէ: Ամենագիտությամբ, անմնացորդ կերպով գիտենալ, այլևս բան չի մնում աշխարհում: Մեռնել հանգիստ մտքով, գոհ, կատարյալ»¹²:

«Սոկրատեսը» լեզենդում Իսահակյանը փոխել է ընդամենը երկու տող.

Նախն. տ.՝ ԻՆչ ես ուզում, պատրաստ եմ քո հրամանին

Ուղղ. տ.՝ Ինչո՞վ եղա ես քո կոչին արժանի

Նախն. տ. Պատրաստ եմ քեզ ծառայելու եղբոր պես

Ուղղ. տ. ԻՆչ ես ուզում, ես պատրաստ եմ եղբոր պես¹³:

Վերջին տողը, դարձյալ փոփոխության ենթարկվելով, կանոնիկ տեքստում հանդես էգալիս այս ձևով. Ասա, խնդրեմ, ես պատրաստ եմ եղբոր պես¹⁴:

«Հրեական առասպել» չափածո լեզենդը՝ «Ըստ Թալմուդի»՝ վերնագրով, առաջին անգամ տպագրվել է 1935 թվականին («ՀՕԿ» ամսագիր, N 5-6): Որոշ փոփոխություններ կրելով՝ «Հրեական առասպել» խորագրով լույս է տեսել 1940 թվականին:

Ավ. Իսահակյանի ֆոնդում պահվող ձեռագիր տարբերակը («Ըստ Թալմուդի») գուգահեռելով կանոնիկ բնագրի («Հրեական առասպել») հետ՝ ներկայացնենք լեզենդի տեքստային տարբերությունները:

Երբ Աստված մարդուն ստեղծեց հողից.

¹² Ավ. Իսահակյան, Արվեստի մասին, Եր., 1877, էջ 59-60:

¹³ Նախն. տ. - նախնական տող:

¹⁴ Ուղղ. տ. - ուղղված տող:

¹⁵ ԳԱԹ, Իսահակյանի ֆոնդ, II բաժին, N 281:

¹⁶ Ավ. Իսահակյան, ԵԺ, հ. 2, Եր., 1974, էջ 219:

¹⁷ Թալմուդ - հրեաների՝ Հին Կտակարանի մեկնությունների վրա հիմնված կրոնական, կենցաղային, իրավական կանոնների ու պատվիրանների ժողովածու:

Հավաքեց հողը երկրի չորս կողմից,
 Առավ հարավից, հյուսիսից առավ,
 Եվ արևելքից և արևմուտքից.-
 Որպեսզի մարդը բախտի քմայքով
 Իր հայրենիքից ուր մղված լինի,
 Իրեն զգա նա այդ հողի մրդին,
 Հարազատ և մոտ, քաղցր իր սրտին,
 Որպեսզի մարդը, երբ ձեռքը մահվան
 Բերե անհազուրդ իր տենչերին վերջ,
 Ամենուր լսե ձայնը մայրական.-

«Արի, իմ որդյակ, հանգչիր գրկիս մեջ»¹⁵:

Տասներկու տողից բաղկացած այս լեգենդը կանոնիկ տեքստում
 երկու տողով կրճատվել է, բովանդակությամբ հղկվել.

Երբ Յանվեն մարդուն ստեղծեց հողից,
 Հավաքեց հողը երկրի չորս կողմից,
 Առավ հյուսիսից, հարավից առավ,
 Եվ արևելքից և արևմուտքից.-
 Որպեսզի մարդը ուր որ դեգերե,
 Ամեն տեղ իրան ըզգա իր երկրում.
 Եվ երբ որ հոգևի և մանը բերե
 Նրա անհազուրդ տենչանքներին վերջ,
 Ամեն տեղ լսե ձայնը մայրական.-

«Արի, որդյակ իմ, հանգչիր գրկիս մեջ»¹⁶:

Այսպիսով՝ Ա.Իսահակյանի չափածո լեգենդների տեքստաբանական
 քննությունը թույլ տվեց գրողի գեղարվեստական մտածողությունը դիտել
 իբրև ստեղծագործական պրոցես, հնարավորինս պարզել, թե ինքնագրից
 մինչև կանոնիկ տեքստ վերամշակման ինչպիսի ուղի են անցել Իսա-
 հակյանի չափածո լեգենդները:

Легенды в стихах Аветика Исаакяна под светом текстологии

Статья посвящена текстологическому изучению легенд в стихах Ав. Исаакяна, которое позволяет рассматривать художественное мышление писателя как творческий процесс, то есть по мере возможности пояснить как разработались легенды в стихах Исаакяна от первоначальной рукописи до основного текста.

¹⁵ ԳԱԹ, Իսահակյանի ֆոնդ, II բաժին, N 282:

¹⁶ Ավ. Իսահակյան, ԵԺ, հ. 2, էր., 1974, էջ 216: